ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

02 հունիսի 2026թ. **N 224-Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԷԴԳԱՐ ԲՈՋՈՒԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա. Փանոսյանի կողմից 29.05.2026թ. թիվ 12/29/(4)-26 գրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել միջնորդություն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին մասնակցող «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Էդգար Միշայի Բոջուկյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ համաձայնություն ստանալու մասին:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026 թվականի մայիսի 3-ին կայացրել է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցելու համար «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակը գրանցելու մասին» թիվ 66-Ա որոշումը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի 68-րդ հերթական համարի պատգամավորի թեկնածու է գրանցվել Էդգար Միշայի Բոջուկյանը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստին մասնակցել են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Վերժինե Առաքելյանը և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ, դատախազական խմբի անդամ Ծովակ Մնացականյանը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ բավարարելով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ, դատախազական խմբի անդամ Ծովակ Մնացականյանի միջնորդությունը՝ նիստն անցկացրեց դռնփակ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ 2026թ. հունիսի 02-ի ժամը 14:15-ին կայանալիք արտահերթ նիստի վերաբերյալ Էդգար Միշայի Բոջուկյանը ծանուցվել է 30.05.2026թ. պատվիրված առաքանիի միջոցով (առաքանի N 555721898, ուղարկող Կենտրոնական ընտրական հանձնաժողով, ստացող Էդգար Բոջուկյան Միշայի, մարզ Լոռի, ք.Վանաձոր, Ներսիսյան նրբանցք, տուն 10ա), ինչպես նաև հեռախոսազանգի և հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստին ներկայացել և մասնակցել են նաև «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի պատգամավորի թեկնածու Էդգար Բոջուկյանը և վերջինիս շահերը ներկայացնող փաստաբաններ Սմբատ Մինասյանը (փաստաբանական գործունեության արտոնագիր N 2717) և Ռոման Կոնինյանը (վկայական N 734):

Փաստաբան Սմբատ Մինասյանի կողմից ներկայացվեց միջնորդություն՝ նյութերին լիարժեք ծանոթանալու համար բավարար ժամանակ տրամադրելու, լսված լինելու իրավունքի արդյունվետ ապահովման, համաչափության սկզբունքի պահպանման և հարցի քննարկումը հետաձգելու մասին: Միջնորդությունը բավարարվեց, նիստն ընդմիջվեց և տրվեց ժամանակ՝ նյութերին ծանոթանալու համար: Նիստը վերսկսվեց 2026թ. հունիսի 2-ի ժամը 18:45-ին:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Էդգար Միշայի Բոջուկյանի շահերը ներկայացնող փաստաբան Սմբատ Մինասյանը հայտնեց, որ վարչական վարույթի նյութերին ծանոթանալուց հետո չհասկացան, թե ներկայացված ապացույցներն ինչ կապ ունեն Էդգար Բոջուկյանին վերագրվող մեղադրանքների հետ: Սմբատ Մինասյանն առաջարկեց ուսումնասիրել ապացույցները, որպեսզի հնարավոր լինի հասկանալ քաղաքական հետապնդում առկա է, թե՝ ոչ, ինչպես նաև ինչու են քվեարկության օրվանից 5 օր առաջ ներկայացնում նման միջնորդություն, ինչը կխոչընդոտի Էդգար Բոջուկյանի պասիվ ընտրական իրավունքի իրացմանը: Էդգար Միշայի Բոջուկյանի շահերը ներկայացնող փաստաբան Ռոման Կոնինյանը խնդրեց ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, որպեսզի հնարավոր լինի պարզել ներկայացված միջնորդության հիմնավորվածությունը:

Միևնույն ժամանակ ներկայացրեց, որ Էդգար Բոջուկյանը հանդիսանում է Լոռու մարզի «Բարգավաճ Հայաստան» կուսակցության բոլոր գրասենյակների համակարգողը, և նրա վերաբերյալ քրեական հետապնդումը կամ կալանքը կվնասի

Էդգար Բոջուկյանի հեղինակությանը, ինչը կարող է անուղղակի ազդել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրողների կամաարտահայտության վրա:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի պատգամավորի թեկնածու Էդգար Միշայի Բոջուկյանը ներկայացավ, հայտնեց, որ մարտ առանց կանոնների մարզաձևի մարզիկ է եղել, այժմ զբաղվում է նաև մարզչական գործով, ներկայացրեց նաև իր գործունեությունը, հայտնեց որ քաղաքական գործունեությամբ զբաղվում է 5 տարի, և կարծում է, որ իր նկատմամբ նման միջնորդություն ներկայացնելը կապված է մարզում իր հեղինակության և քաղաքական կողմնորոշման հետ: Էդգար Բոջուկյանը հայտնեց, որ իր բնակարանում և աշխատավայրում խուզարկություններ են եղել, և մեղադրանքը հաստատող ապացույց չեն հայտնաբերել:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ներկայացուցիչները պատասխանեցին «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի պատգամավորի թեկնածուի շահերը ներկայացնող փաստաբանների և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների հարցերին:

Սույն վարչական վարույթի շրջանակներում ուսումնասիրելով միջնորդությունը և կից ներկայացված նյութերը, ինչպես նաև լսելով վարույթի մասնակիցներին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ Սահմանադրության 48-րդ հոդվածով երաշխավորված՝ պասիվ ընտրական իրավունքի իրացմանը խոչընդոտելու նպատակ առկա չէ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գնահատմամբ՝ առկա չէ հանգամանք, որը հիմնավոր կփաստի քաղաքական դրդապատճառների առկայությունը:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«5. Պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ: Առանց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության՝ նա չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված հարցի վերաբերյալ որոշում ընդունում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով: Սույն մասով սահմանված դրույթը չի տարածվում մինչև թեկնածու գրանցվելը ձերբակալված կամ կալանավորված քաղաքացիների, ինչպես նաև ձերբակալված անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նշված անձանց կալանքի ժամկետը երկարաձգելու դեպքերի վրա:»:

Քննարկելով ներկայացված միջնորդությունը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Միջնորդությունը բավարարել՝ տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին մասնակցող «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Էդգար Միշայի Բոջուկյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

2026 թվականի հունիսի 2
ք. Երևան